

խօսքը) ազգայնական հայրենասիրական տեղեկությունները, որոնք մի քանի հարյուր տարեկան կամ գոնե երկուսուկուս անկողնից անցած հայրերին...

Առաջին ամբողջ մամուլը, նրանց հետևանքով, սպասում են հեռագրական գործակալություններից և նրանց ղեկավարներից ոչ թե պարզապես, այլ անկախ, հարազատ և թարմ տեղեկություններ:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դուք, պ. Աղայանց, փախուստ էք տալիս մեր հարցերին պատասխանելուց, և անուանում էք այդ հարցերը «այնքան չափ և այնքան պարզ», որ պատասխանելու համար հարկավոր է «երկար ժամանակ»: Դուք էք միամիտ, թե ընթերցողին էք միամիտ կարծում: Մեր դրած հարցերը ոչ չափ են և ոչ պարզ: Մենք ասեցինք, ցույց տուցինք 1) այն վիճակների թերությունները, որ ունի Հրատարակչական ընկերությունը, և 2) այն դեպքերը, երբ «Մշակը» տեսաւ այդ թերությունները, բայց չը մերկացրեց: Այդ հարցերի հետ միասին մենք ապացուցեցինք, որ «Մշակը» ամենայն խստություններով քննադատել է ընկերության գործունեությունը, և ձեր պարտաւորությունն էր խոստովանել, որ այդ, մեր առածը ճիշդ է, փոխանակ՝ խոյս տալու հարցից, արդարանալով, թե հարցերը «չափ և ոչ պարզ»:

Քննենք ձեր նամակի մի քանի կետերը.

1) Ձեր այսօրվայ նամակում (որը տպում ենք առանց մի բառ փոխելու), դուք, իբրև ապացույց ընկերության պակասություններ, մատնանի էք անում, որ երբ ընկերությունը գտնվում էր մեր կուսակցության հակառակ խմբի ձեռքում, նա, այդ հին վարչությունը ձեռք առաջարկեց «ամբողջ և անաղիւս պայմաններ» ձեր մի աշխատություն համար: Միանգամայն հաւատում ենք, «հինգ պայլիսի» անաղիւս և ամբողջ վարչություններն էին, որ ստիպեցին մեզ վերադառնալ ընկերության հին ղեկավարներին: Դուք հենց այդ փաստով, ձեր բերանով հաստատում էք, որ իրավիճակը ընկերությունում մի ժամանակ գտնվում էր «ամբողջ և անաղիւս» ձեռքերի մէջ, որից նրան ազատեցին այժման ղեկավարները: Դրա համար դուք չնորձախաղալով, պիտի յայտնէք մեզ և ոչ զբոսնորսություն:

2) Դուք ասում էք. «Արդեօք ներկայ վարչությունն էլ նույն վերաբերմունքը չունի դեպի իր չը սիրած անհատները», և, իբրև ապացույց բերում էք Շիրվանդաշինի յայտնի դեպքը: Եթե բերեք մի ուրիշ փաստ, օրինակ մենք մի րօպէ մտածէինք, բայց ձեր բերած փաստը ինքն արդէն ջրում է ձեր յարձակումը, իբրև մի այնպիսի փաստ, որն արդար անհրաժեշտ է ոչ մի ճանապարհ չէ թողնել ձեր պաշտպանալի համար: Գոհունակներով, ամբողջ մի ժողովի առաջ

— Նրանք ասաց, որ պէտք է դնալ գործակալի մօտ, ներկայանալ և անոր յայտնել ինչ որ ունենա:

— Եւ, դաքը գործակալի մօտ:

— Ինչպէս չէ, դաքը, ան ալ բարկացաւ և ըսաւ՝ կտարի ձեր ոտը, մի երկու կօպէկ ունէինք, ան ալ դուք պէտք է խլէք: Եւ ծերունի ըսանաւ մեկնեց ինձ Կաթողիկոսի դիւանատան թուղթը, որ ամբողջ 5 օր խեղճ էր կարողանում հասցնել առաջնորդին:

Այդտեղից գնացինք Հաւաքարի հրապարակ, Նոյնօրինակի ըրարկներում: Աստուած իմ թշնամուն ցոյց չը տայ, ինչ որ տեսանք այդ տեղը: Մի սենեակի մէջ ապրում են 16 հոգի, միայն 5—6 հոգի վերմակ ունեն, բոլորն էլ գոռատ, հիւսնադոտ, ցնցոտիների մէջ փաթկած: Այդ 16 հոգուց և ոչ մէկը գործ չունի, այլ ապրում է միայն նրանով, որ 24 ժամը մի անգամ ճաշում է Սօլալի ճաշարանում:

— Աման աղաներ, դիմեցին մեզ, աղաի մէջ կորանք, շապիկ չունենք, ետիպալ չունենք, մենք ալ մարդ ենք, մենք ալ հայ-բրիտանական ենք: Միւս սենեակում նոյնպիսի վիճակի մէջ ընկած են նոյնպէս 18—20 հոգի:

Մենք չարժանակում ենք ցուցակագրել և նշանակել նրանց պահանջները: Հասանք ս. Միսաս եկեղեցին: Մի երկար և լայն սենեակում, եկեղեցու դարձում, նստած են 30 հոգի, որոնց մէջ և կանայք: Սրանք բոլորն էլ նոր են եկել.

ապացուցեց, որ Շիրվանդաշին ինքն է ղեկն ընկերության աշխատանք խնդրել, ինքն է աղաչել, որ ավանս տան, ապացուցեց որ նրան յայտնել են, թե իր թարգմանությունը, իբրև անպիտան և անհոգ, չի տալիս, և այդ բոլորից յետոյ, փոխանակ յետ դարձնելու ընկերությանը՝ հասարակականից կօպէկ-կօպէկ հաւաքած փողը, նա դեռ իրան թող տուց մի թերթի մէջ, ամենամանկալի. ձեռք ամեն տեսակ կեղծ թղթով մի ամբողջ հիմնարկություն, եօթ հոգուց բաղկացած վարչություն վրա: Եւ դուք դեռ հնարաւոր էք համարում մի այդպիսի սկանդալ պաշտպանել: Կամ միթէ կարծում էք, որ ամեն մարդ, որ կրում է գրողի անուն, իրաւունք ունի մի ընկերության փողերն անարգար կերպով սեփականացնել և չը վերադարձնել: Միթէ մարդիկ նրա համար են գրողի անուն սեփականացնում, որ վատ թարգմանություններ անեն, և աւելորդ փողեր ստանան: Մի չնորհա՞լի գրողը, ասում էք դուք, բաւական անհոգ էք վարչություն արժէ: Բայց դուք մոռանում էք, որ մի չնորհալի վարչություն էլ բաւական անհոգ թարգմանիչ արժէ: Մենք պահանջում ենք, որ ամեն մի գրող ինքի մի և նոյն ժամանակ մաքուր և մարդ: Մի մոռացեք որ մի լաւ մարդ ոչ թէ քառասուն, այլ հարիւր քառասուն վատ գրող արժէ: Մենք չենք թող տայ, որ գրողի կամ հասարակական գործողի դիմակի տակ՝ մարդիկ հաւանան են մաքրություն և արդարություն...

Սակայն, ցույց տալու համար, որ վարչությունը վերին աստիճանի քննույն է վերաբերվել դէպի աշխատատեղերը, և չէ ցանկացել ոչ ոքին շտապելու անել, մենք ձեր ասած կը դնենք մի քանի փաստեր: Ուրեք են ընկերությունից զբոսնորս. Պ. Պոստան, Յ. Թումանյան, Շիրվանդաշին, Վ. Փափաղեան և այլն: Արդ՝ Պոստան, իր թարգմանություններն համար վերցրել է ավանս, հակառակ այն ժամանակվայ ընդունված կարգին: Թումանյան չորս տարի արդէն ընկերությունը պարտ է մօտ 60 րուբլի և չէ տալիս: Շիրվանդաշին վրա աւելորդ փող կայ՝ իր ստացած աւանսից և մինչև այժմ էլ չէ վերադարձրել: Փափաղեանին, վարչություն անդամները՝ անապալով նրա խնդրերին, նոյնպէս ավանսով 100 ր. են տուել: Եւ փաստ էք ուզում: Մէկն էլ դուք գիտէք: Ինչ կասէք, պ. Աղայանց: Այդպիսի մեծանոցություն համար զո՞ւ պիտի լինել վարչությունից և ոչ թէ նրան հայհոյել:

Շարունակությունը միւս անգամ:

P. S. Բազումից, մեր թղթակից Ա. Ղուկասից գրում է մեզ հետևեալը.

«Պ. Աղայանցին նամակը, անկախ նրա մտքերից, մի հետաքրքիր կողմ ունի. դա նրա ինքնաւստան ու թիւնն է: Նա այնքան վատանկերպով է գրում իր նամակը, որ կասեք գործ

մեծ մասը անկողին ունի, բայց չափերը ոչ կօչիլ ունեն, ոչ վարտիք և ոչ չափիկ: Նրանք գանգատվում են, որ 24 ժամը մի անգամ ճաշելով ճաշարանում, չեն կարողանում կշտանալ. խնդրում են չը մոռանալ իրանց ջատկի օրը, որ կարողանան թափախել գոն մի հատ կարմիր ձուռի:

Կարգադրելով, որ դրանց կէսը փոխադրվի մի ալ տեղ և խոստանալով կատարել իրանց ցանկությունը ու ցուցակագրելով պահանջված իրերը, մենք այնքանում ենք ս. Կարապետ եկեղեցու դպիր: Այդպիսի մի խոցում, որի կէսը լցված է կարթած կարասիներով ու եկեղեցական անօթներով, պառկած են 16 հոգի. բայց այդ կէսը գրեթէ մի մեծ հաւաքուն է: Դրան առաջ, մի վերմակի մէջ փաթկված, ընկած է մի 70-ամեայ պառաւ կին. նա կոյր է, համր, խուլ, արեգակը տաքացնում է նրա կմախք դարձած մարմինը. նա սարսափելի ճշնոյտ տպաւորություն է թողնում. կողքին կանգնած մի կին, նրա հարսը, պատմում է, որ նա ոչինչ չէ զգում, անդամալքւո՞ւ է:

— Բայց ինչի համար նրան ձեռք հետ բերել էք վանից, այսքան հեռու տեղ:

— Նա ինձ կաթ է տուել, աղա, ինչպէս կրնայի երեսի վրա ձգել, պատասխանեց մի ուրիշ, մօտ 50 տարեկան, ցնցոտիներով ծածկված պառաւ: «Ինձ կաթ է տուել, ինչպէս կրնայի նրան երեսի վրա ձգել» — այս խօսքերը անմոռանալի

ունի լակ ճշմարտությունների հետ: «Հրատարակչական ընկերություն» երկարամեայ փորձը ցույց է տուել մեզ, որ նրա վարիչների մէջ խմբագրի գոյությունը միշտ բարոյական վնաս է հասցրել ընկերությանը, — գրում է պ. Աղայանց այնպիսի խոր համոզմունքով, որ կարծէք մի բնական օրէնքի մասին է խօսում: Կարծէք, չէ կարելի հենց այդ ընկերության մէջ գործը այնպէս դնել, որ նրա նոյնպէս երկարամեայ փորձը մի ուրիշ հակառակ բան ցոյց տար իրան՝ պ. Աղայանցին: Մասնաւորապէս նրա այս խօսքերը. «Քաղաքական» Հրատարակչական ընկերության վարիչների մէջ մտնելուց յետոյ՝ «Մշակը» ոչ միայն չէ յարձակվում ընկերության թերությունների վրա, այլ սկսում է պաշտպանել նոյն իսկ այդ թերությունները ամեն սև պիտակ ցոյց տալով և ոտնատակ տալով ամեն մի աշխարհ ճշմարտություն: Թվում է թէ պ. Աղայանց, ցանկանալով՝ կարող էր աւելի ուժեղ և ճարտար լեզուով գրել և այդ գրածի հակառակը, եթէ ի հարկէ, ունենար դրա համար յարմար տրամադրություն: Մի խօսք եւս Պ. Աղայանցից, ակնարկելով որոշ գրողների վրա, «համակիր չէ», որ նրանք դրա կան մաքուր ու թեման դաւաճաններ են: Զարգում ենք, պ. Աղայանց ձեր կարծիքը, բայց ձեր կարծիքը չենք բաժանում: Բարեհաճեցէք, խնդրում ենք, մնալ դուք-ինքներդ ձեր այդ կարծիքի մէջ:

Մ Ս Տ Ե Ն Ա Պ Ի Ռ Ո Ի Թ Ի Ե

Further Correspondence respecting the Asiatic Provinces of Turkey and Events in Constantinople, London, 1897.

Այս հրատարակությունը պարունակում է իր մէջ Ֆոնտանա, Շիրվան, Բուլան, Ուլիստա Մոնասան և միւս հիւպատոսների պաշտօնական զեկուցումները Փոքր Ասիայի տնտեսական և մտաւոր վիճակի մասին: Փոքր Ասիան, որտեղից հազարաւոր կարօտ և չքաւոր մարդիկ են ցրվել աշխարհի ամեն կողմերը, գտնվում է ներկայումս տնտեսական ամենաբաւոն դրութեան մէջ: Խորաբերդի հիւպատոս Ֆոնտանա, հետազոտելով տեղւոր տեղեւոր երկրի թշուառությունները, ասում է, որ մարդիկ այնքան դուրկ են ամենատարրական պիտանքներից, որ թէֆոմների գաղափարը մի ծաղր է: Այնտեղ, ուր քաղցը, սովը, մեղրությունը և մշտական սարսափը հասցրել են մարդկանց անամական վիճակի, մարդ հասարակ կենսքը պահպանել արդէն հերոսութեան է համարում: Միայն Արաբիկում 1130 տարի կին և 1943 որդեր կան, իսկ գիւղում 80-ից աւելի արի կանայք կան, իսկ աւելի մեծ թվով որդեր: Այնտեղ նույն իսկ կանանց և երեխաներին էլ չը խնայեցին:

Հայաստանի բեֆորմատոր և նորագոյն լուստարիչ Շաքիր-փաշայի ճանապարհորդությունը կարելի էր դոնդիշտական մի ծիծաղելի պատմութեան հետ:

Խօսքեր են: Հաւածված, զազանություններից, կատարածից փախչող կինը իր մէջ զգում է այնքան բարոյական ուժ, հերոսություն, որ ամեն վտանգ յանձն առնելով, անհապառա՞ւ թշուառություն անցնելով, իր հետ քար է տալիս, բերում մի խուլ, համր, կոյր, անդամալքւո՞ւ և կիսակենդան դառնալով կնոջ, չարժան միայն գուլթից:

Այդտեղ իմացանք, որ եկեղեցու քահանայն մի քանի ծխականներ երբեմն երբեմն թէյ, չաքար են տալիս թշուառներին, որոնք գրեթէ տկուր են ամենքը, մանաւանդ երեխաները: Այդպիսի կանգնեք անունում. հաշւում ենք ցուցակագրված պահանջները: Աւելին կարգում է.— 30 վերմակ, 20 դօշակ, 40 շապիկ, 35 վարտիք, 10 չինիլ, թէյ, չաքար, հաց, ճանապարհածախ: Բայց որտեղից տալ, որտեղից վեր առնել: Բարեգործական ընկերության գրասենեակում այլ ևս ոչինչ չէ մնացել. հասարակությունը գրեթէ բոլորովին մոռացել է այդ թըշուառներին:

Կտոմ հասնելով Հաւաքարից անցնալ Սօլալի: Մի քանի րօպէ առաջ մեր տեսած, ծովացած թշուառություն տեսարանը փոխեց: «Չափիկ մօտենում է», ասա այն աղաղակը, որ լսվում է մարդկանց բոլոր չարժանիքի մէջ. ամենքը խուլվում են, չտալով են, աշխատում են ջատկի համար պատրաստություններ տեսնել, ընծաներ գնել: Ամենքը պատրաստվում են տօնելու քրիստոնէական ամենա-

թիւն համարել, եթէ նա կատարվում չը լինէր այնքան ողբերգական հանգամանքների մէջ, որտեղ ամեն մի ժպիտ սառնում է, ամեն մի կատակ սարսուռ է բերում մարդու վրա: Հիւպատոսները ասում են, որ Շաքիր-փաշայի գալը չէր դադարեցնում, գոնե ժամանակաւորապէս, այն անարգարությունները, որ կատարվում էին ամեն տեղ: Հարկերը պահանջվում են այնպիսի խստութեամբ, որ երբեք չէ եղել Հարկ են պահանջում և այն մարդկանց համար, որոնք կոտորածի միջոցին մեռել են. հարկի փոխարէն խլում են այն նպաստները, որ ուղարկել են Անգլիայի և Ամերիկայի նպատակով ֆոնդերը: Եթէ տուրքերը չը վերցվեն, այն ժամանակ պաշտօնականները, որոնք վաղուց է կանոնաւոր ուժիկ չեն ստանում, պէտք է քաղցած մնային... Իսկ այժմ նրանք աւելի քան ապահով են իրանց, ամենքն աւելի խեղճ ժողովրդին:

Հիւպատոսները, խօսելով կոտորածների մասին, հաստատում են, որ հայերը իրանք ստիճաններ չէին տալիս և սկզբնապատճառ չէին լինում, այլ ամեն բան նախամտածված ծրագրով կատարվում էր թիւրքերի պաշտօնական մարմինների միջոցով:

Հրատարակության առաջին երեսներում ներկայագրված են Հաւաքանի դրուական անկարգությունները և Կ. Պօլսի բանտերի սարսափելի դրութիւնը, պարզաբանված է և այն քաղաքականությունը, որին այժմ հետևում է Թիւրքիան, մուսուլմաններ լցնելով այն քաղաքները և դաւառները, որտեղ հայերը դեռ գերակշռող դեր են կատարում:

Ք.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅ

Ապրիլի 7-ին Օպերային խմբի ներկայացումները դադարեցին: Չը նայած թանգ գնեին թատրոնը միշտ լի էր լինում: Խումբը իր գոհացուցիչ անսամբլով, աչքի ընկնող առաջնակարգ ուժերով գրաւել էր հասարակության ուշքը, որը թատրոն յաճախելով, վայելում էր էսթետիկական մեծ գուարճություն: Խմբի աջողությունը հասարակությունը մեծ բաւակաւով ընդունաւ: Բայց անհապառա՞ւ թշուառությունները, ինչպէս վկայում են մօտիկ մարդիկ, դուռ արդենք է մնացել մօտ 8000 րուբլի: Նոյն արդիւնաւոր հետևանքն ունեցան և անցեալ տարվայ ներկայացումները:

մեծ տօնը: Բայց արդեօք մտածում են այդ ուրախութեան տօնին մասնակցել անել այն բազմաթիւ մեղք, քաղցած, վիրաւոր, բարոյալքւո՞ւ և ֆիզիկալապէս տանջված թշուառներին, որոնք նոյն իսկ ջուր չեն կարողանում խմել, որովհետեւ շուրջն էլ փարայով է հոս, որոնք յիշում են վշտով և դառնություններ, թէ իրանք էլ մի օջախ ունէին, մի տուն ունէին, իրանք էլ տօնում էին ջատկի, թափախվում էին կարմիր ձուռով, ուրախանում էին և միմեանց ասում «Բարիտոս յարեա ի մեռելաց»:

Եւ միթէ գիտաւ է Թիֆլիսի հասարակության համար մի կտոր հացով, մի հատ ձուռով, մի քանի կտոր չաքարով, մի երկու հազուստով սիտիկ բռնություն այդ անմեղ գոհներին: Եթէ ամեն մէկը իր առատ սեղանից մի վոքերիկ մաս տայ, թշուառ գաղթականները կարող են գոնե ջատկի գիւշերը մի րօպէ զգալ, որ եղբայրակիցների մէջ են և բոլորովին չեն մոռացված: Ամեն մարդ ինքն ուղղակի կարող է իր ողորմությունները տանել ցույց տուած տեղերը և բաժանել, կամ յանձնել Բարեգործական ընկերության ու Թիֆլիսի Մասնաժողովին: Դա չը լինի ամեն ամեծ և ամենազեղեցիկ նուէրը, որ մարդիկ կարող էին անել թշուառ գաղթականին այս մեծ տօներին:

Չը մոռանալ:

Հ. Առաքելեան

Ուրիշ կերպ էլ չէ կարող լինել, բաւական է, որ խումբը իր կողման բարձրութեան վրա է կանգնած. նա կը գրաւէ, նա կը զօրացէ, հասարակութեան մէջ պահանջ կը ծագեցնէ և ճաշակ կը կրթէ: Հասարակութիւնը կամայ աւելանայ, պիտի ենթարկուի այդ զօրեղ հոսանքին. նա չէ՛զոք մնալ չէ կարող: Այդ են ապացուցանում ակներև փաստերը: Բազուի թատերական հասարակութիւնը, որ յաճախ տեղի անտեղի ենթարկուի է մեղադրանքի՝ որպէս իր անտարբերութեան, զէպի թատերոյն և գեղարուեստը ունեցած անհոգութեան, ագիտութեան համար, մի անգամ ևս ապացուցեց իր գիտակցութիւնը և մեղադրանքներն անիրաւութիւնը: Հասարակութիւնը ոչ միայն գնահատեց, այլ և վարձատրեց արժանաւոր մշակներէն: Պատգամ, Սիւնեքեր, Պերեկ—խմբի այդ փայլուն անդամները ոչ միայն համակրութիւն գտան, ոչ միայն արժանացան համակրական հազարապետ ցոյցներէ, այլ և ստացան թանգազին ընծաներ: Սիւնեքերը Պատգամի ստացած ընծաները՝ խաղաղամեծերու հանգրձն, հաշուով էին մօտ հինգ հազար բոլորի... Դէպի թատերոյն անտարբեր, զէպի ներկայացումները անհոգ հասարակութիւնը ամեն երեկոյ 1 ր. 55 կ.—5 ր. չի տայ մի տեղի համար, թատերոյն չի գնայ, 9—12 բարձրով օթեակ չի վերցնի և վերջապէս հազարներով ընծաներ չի նուիրի... Թէ օթեակներում, թէ առաջին կարգերում և թէ նոյն իսկ ընծայաբերութեան մէջ աչքի էին ընկնում հաշիւը, թատերոյ յաճախող հայ հասարակութիւնը համարեա միշտ ներկայ էր լինում ներկայացումներին: Նրան ոչ խնդրում էին, ոչ հրաւիրում, ոչ յորդորում և ոչ էլ յանդիմանում, ինչպէս սովոր են անել հայոց ներկայացումներին ժամանակ: Նա ինքը իր կամով նոյն իսկ զըլխապատառ դիմում էր թատերոյ, որովհետեւ բաւականութեամբ էր գտնում, սպասարկութիւն էր ըստանում: Այս աչկաբա իրողութիւնը թող զօնէ չափաւորէ այն անսահման յարձակումները, որ յաճախ «ազգասիրաբար» ուղղվում են հայ հասարակութեան հասցէին նրա համար, որովհետեւ հասարակութիւնը չէ յաճախում հայոց թատերոյն ազգայն, անհատը, ինքնակող հայ բարսիտներին: Եւ առհասարակ ներկայացուցումներին ակահաստես լինելու...

Ն. Գալսեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, ապրիլի 7-ին

Ձեր առաջարկած հարցերը այնքան շատ են և այնքան պղտոր, որ դրանց թորելու և պարզելու համար երկար ժամանակ է հարկաւոր: Հարկաւոր է արտագրութիւններ անել Հրատարակական ընկերութեան արձանագրութիւններին՝ սկսած այն օրից, երբ ներկայ վարչչների հակառակ կուսակցութեան վարչութիւնը՝ անապին և տմարզի պատմանի ատաղաբելով հարկադրեց ինձ յետ վերցնելու իմ առաջարկած աշխատութիւնը: Եթէ կարգաւ այս մասին նրանց կայացած արձանագրութիւնը, կը տեսնեք, որ իմ տուած ածականները շատ թեթեւ են և մեղմ:

Արդեօք ներկայ վարչութիւնն էլ նոյն վերաբերութիւնը չունի զէպի իր չը սիրած անհատները: Եթէ ոչ, ապա այդ ինչ վերաբերումները էր, որ ունեցաւ զէպի Շիրվանզադէն, մոռանալով, որ միջնորդակ գրող, ինչ կուսակցութեան կողմի պատկանի, բառաւոր հատ անհոգի վարչութիւն կարծէ: Միթէ Շիրվանզադէներ շատ ունեւր, որ եղածներին էլ թող էք տալիս ոտնակոխ անելու: Այդ վարչութիւնն ինչու փախուտ տուաւ և՛ միջնորդ գաղափարին, և՛ մասնագիտութիւնը կազմելուց: Այդ վարչութիւնը ինչու իր նախագահի մասնաւոր զըլխացաւները իր վրա առաւ: Եթէ պատեհականութեամբ, իբրև մի միջնորդ, չէ կարելի հասնել բռնակալութեան՝ իբրև նպատակի, ապա այսպիսի վարմունքներին ինչպիսի մեկնութիւն պէտք է տալ:

Բայց այս բոլորը գեղե կիսատ թողնենք և գանք վճռապէս պատասխանելու ձեր մէկ հարցին միայն, թէ արդեօք մենք միացած ենք եղել հակառակ կուսակցութիւններին հետ թէ ոչ: Միթէ իրաւ զօր կարծում էք, որ եթէ մի այդպիսի միութիւն եղած լինէր, մեր թիւն ընդա-

մենք 8—9 հոգի կը լինէր: Ոչ, պարտնէր, եթէ այդպիսի միութիւն լինէր, ձեր կուսակցութեան զըլխին մի եւրօպական կոնցերտ կը սարքվէր: Բայց հիմա դուք այդ չէք ասում կարծես, այլ թէ «անհամակրելի տարրերից» մի խումբ է եղել կազմված և ոչ թէ կուսակցութիւններից: Սրան կը պատասխանեմ աւելի ընդարձակ, որպէս զի ձեր «անհամակրելի» համարած տարրը համակրելի դարձնեմ ամենի համար:

«Մշակը» իր գոյութեան ամբողջ ընթացքում մի ազգի արեւմտեկ անդամներին մէջ միութիւն է բարոյեղ առանց կրօնի խտրութեան, ինչպէս և մի հայրենիքում բնակող զանազան ազգերի մէջ համերաշխութիւն: Կարծել է արդեօք «Մշակը», թէ այդ կը լինի «անհամակրելի տարրերից» բաղկացած մի կազմութիւն: Եթէ ոչ ինչու անհամակրելի տարրերից կազմված է համարում մի ազգի գրականութեան ներկայացուցիչներին միութիւնը և առանց դաւանանքի խտրութեան: Այսինքն գրողներից աչքի ընկնողները, թէ ձեր և թէ երիտասարդ, մի մօտիկ և լավ են հաստատել առանց կուսակցական և մտաւոր դաւանանքի խտրութեան, բայց հետեւալ պայմանով:—Ամեն մի գրականագետի պարտաւորութիւնը պէտք է լինի բարձր պահել իր կոչման և գրականութեան պատիւը, չը մոռնալ, չը կեղտոտել նրան և պաշտպանել իր ընկերների պատիւը թշնամական յարձակումներով: Այս կապը, այս մօտիկութիւնը գաղափարական է, բոլորի հոգի տրամադրութիւնից է առաջացած, չը կայ որ և է նիւթական բան,—ոչ ծրագրի, ոչ ժողով և ոչ որ և է ընկերութեան պէս մի բան: Հէնց այս է պատճառը գոյցէ, որ «Մշակը» խմբագրութեան գրողները ու ուրիշ շատերը հետեւ են մնացել այս միութիւնից: Ենթահայլ եմ, որ դուք առ իմ տուիք այս գաղափարական միութեան մասին յայտարարելու թող ամեն մի հայ գրականագետ, ուր էր լինի, ինչ ուղղութեան և կուսակցութեան էլ պատկանելի լինի, միանայ և ձուլվի այս գաղափարական ընկերութեան հետ: Եղբայր եմք մեք, որք մերկաւ էինք դատված: Թող էլի դատված մնանք, բայց հանդուրժենք միմեանց մտաւոր դաւանանքի և խոտովանենք, որ մենք եղբայր ենք չի մի սուրբ գրականութիւն:

Ղ. Աղայեանց

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, ապրիլի 8-ին

«Մշակը» պատրվալ համարում սրտի ցաւով կարգացի Թիֆլիսի հայ քահանաներից ոմանց վերին ատիճանի անտարբեր և անգույն վերաբերմունքի մասին զէպի իրանց տարազի գաղթական օրդերը: Ձը կարողանալով որ և է կերպով ամօրել իմ այդ անաւեր, թշուառ օրդը հակառակորդի դաւանութիւնները, սրանով պատիւ ունեմ յայտնելու գաղթականներին, որ ինչ օրինակատարութեան կամ կրօնական արարողութեան պէտք ևս զգալիս լինեն, կարող են համարձակ դիմել ինձ, ու կարապետ եկեղեցին: Եւ մանուէլ քահ. Նաղարահանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կ. Պոլսի մեր թղթակիցը տխուր գոյնեւում նկարագրելով կոտորածից մնացած հայ օրերի վիճակը, յարձակվում է հայոց պատրիարք Օրմանեանի վրա, որ այդ պարզ մարդասիրական գործունէն էլ ցոյց է տալի անհեղինակ անհոգութիւն:

Կովկասեան կառավարչապետի կարգադրութեամբ, Ղազարի նախկին գաւառապետ Բարանովսկիի դատի է ենթարկված՝ արքունական փողեր վաճառելու համար: Ի զէպ, պէտք է աւելացնենք, որ Բարանովսկի շատ տխուր յիշատակներ է թողել այդ գաւառում: Դատի է ենթարկվում—Ղազարի այժմեան գաւառապետ Բեմանով, մեղադրվելով Բարանովսկու յանցանքը թաղցնելու համար:

Մեր թղթակիցը Թէհրանից մեղ գրում է. «Այստեղ ժամատախի վախն ու սարսափը կարծես սկսել է հանդարտվել: Կառավարութիւնը, իր կարողութեան համեմատ, մի քանի կարեւոր նախադրութիւններ ձեռնարկեց: Ուստ և անգ-

լիական կառավարութիւնների բոխիչներ ևս օգնութեան հասնելով, ուսման յանձն առել են արեւելեան սահմանադրութիւն (Ա.Ֆրանստան և այլն): Նակել, իսկ անգլիացիներն հարաւային սահմանները (Պարսից ծոց, և այլն) հսկում են Բարեբաղաբար, Հնդկաստանից եկած լուրերն օր ըստ օրէ լաւանում են:»

ԲԱՍՏԵՐԻՅԱՆԻՑ մեղ գրում են ապրիլի 7-ից. «Երբորդ օրն է, որ Բիրի-Հէյրաթում Բօզէլիի նախի ֆօնտանը այրվում է: Հրդեհը առաջացել է նախահօրից ուժգին կերպով դուրս չարավազ կայծաքաբերի շփվելուց: Հսկայական ֆօնտանը բռնկելով փոխարկվել է մի գմալելի հրեղէն սիւնի. ահագին բաղնիքներում մարդիկ գնում են տեսնելու այդ «տեղի սիւնը»: Այդ հետաւոր լայնի գիշերները լուսաւորվում է քաղաքը:»

ԵԿԱՏԵՐԻՆՆԱՅԱՆԻՑ մեղ գրում են. «Երէկ, ապրիլի 4-ին, երկրորդ ակումբի դահլիճում կայացաւ կոյր երաժիշտ Ն. Տիգրանեանցի նուագահանդէսը: Այսպիսով օր նշանակված լինելու պատճառով՝ բաղնիքի շատ չը կար, բայց նուագահանդէսը անցաւ շատ կենդանի: Պ. Տիգրանեանը իւրաքանչիւր նուագաւորից յետոյ վարձատրվում էր ծախահարութիւններով: Կոնցերտին մասնակցում էին տեղացիներ՝ տիկին Ե. Օղաբաշեան և ջութակահար երիտասարդ Նաղարահան:»

ԵՆԻՇԵՆԻՑ մեղ գրում են. «Հօշուտ զբաւում էր թիւրքահայ գաղթականները մարտի 15-ին դուրս գնացին քաղաքից և այդ պատճառով Բարեգործական ընկերութեան ձեռքի ճաշարանը, որ բացված էր գաղթականների համար, փակվեց: Այնպէս օրերը դարձեալ կան 7 հոգի: Դրանք ապաստան են գտել Մեղրեցոյ և Վերին Սալի եկեղեցիների սենեակներում: Նրանց իսկ այժմ կերակրում են անհետ: Մեր թիւն կառավարիչ-վարչապետը, գաւառապետը և քաղաքագլուխը հանդանակութիւն են բացել գաղթականների օգտին: Հաւաքված գաղթարից բաժին կը հանի և այստեղ եկողներին: Հանդանակութիւնը նոր է սկսվել և դեռ մի յաշմի գաղթարի չէ հասել: Տեսնենք, թէ շուշեցի հարուստը ինչ չափով կը չափի իր բաժին նուիրաբերութիւնը իր համարին եղբայրներին: Խորհուրդ կը տայինք շուշեցիներին՝ զատկական մատաղը ևս, որ այնքան եռանդուն կերպով հաւաքում են, միացնել գաղթականներին գումարի հետ: Թող հաւատացած լինեն շուշեցիները, որ գաղթականներին մատաղն աւելի հաճելի կը լինի Աստուծոյն, քան ժողովրդին «թիւրքա» բաժանելը...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Անգլիական համայնքների ժողովի ապրիլի 8-ի նիստում:

Սմիթ (գիմելով արտաքին գործերի բարտաւարին). ինչ պատիժ են ստացել Ալիի կոտորածի հեղինակները, որոնք 1500 անգլի հայ ըրիտաճեաններ են սպանել անգլոթ կերպով:

Կըրզօն. Թագուհու կառավարութեան դեսպանը Բիրիւկ Կերի խիստ առաջադրութիւններ էր արել այդ մասին դեկտեմբեր ամսին, բայց պատասխան չէ ստացվել: Բիրիւկ Կերի կը շարունակի ըննել գործը:

Աղանայի առաջնորդ հայր Թերզեանի գրած նամակից «Daily News» լրագրի թղթակիցը հաղորդում է հետեւալը. «Բազմաթիւ քաղցած հայեր ամեն օր չը չարապետում են ինձ: Դպրոցում ևս պատասխանում հայ մանուկները հայ չունեն ուսուցիչ: Թշուառութիւնը շատ մեծ է: Աշխատանքի միջոցները սղաւվել են. իսկ թիւրքերը՝ կրեմի ասպտամբութիւնից զրգոված՝ ֆանատիկ կոստյակ են և ամեն տեղ սարսափ է տիրում:»

ՊԱՏԵՐԻՅԱՆԻՑ ԴԱՇԵՐԻՑ

Ինչպէս յայտնի է հեռագիրներից, ներկայ թիւրք-յունական պատերազմի նախերգանքն էր այն արշաւանքը, որ գործեցին յոյն կամաւորները զէպի Թերբիայի սահմանները: Բերում ենք մի քանի մանրամասնութիւններ, որ հաղորդում են եւրօպական լրագիրները:

Կամաւորների զօրաբաժինը բաղկացած էր 2800 հոգուց, որոնց մէջ կային 85 իտալացիներ: Հրամանատարներն էին յունաց պաշտօնաթող օֆիցերները: Այդ զօրաբաժինը ամբողջովին կազմակերպել էր յունական գաղտնի ընկերութիւնը, որ կոչվում է «Նանիկէ Հեթերիա»: Եւ այդ պատճառով իւրաքանչիւր կամաւորի գտակը զարգարված էր ընկերութեան նշանաւաններով՝ տիկ խաչ, երկու սկզբնատուներ Է կապուա և սպիտակ գոյնեւում և մակագրութիւն: «Սրանով կը յաղթեան—կամաւորները լաւ զինված էին: Նրանց մէջ էին մակեդոնական պաշտամունքի նշանաւոր խմբապետները—Արշաւանք սկսելուց առաջ զօրախումբը պատերազմական կարգով կանգնեց բանակում: Մօտակայ գիւղից եկաւ հոգեւորականութիւնը և մարդիկը կատարեց կրեմի, Մակեդոնիայի և Կպիտոսի եղբայրների աղատութեան համար: Պատարագից յետոյ բոլոր կամաւորները հազարդեցան, ապա երգիչներն կուսել աղատութեան համար կամ մեռնել:

Նոյն գիշերը կամաւորները անցան սահմանը: Բաժանվելով երկու մասի, կամաւորները վերցրին մի քանի մարտկոցներ, որոնց թիւրք պաշտպանները անհատուր եղան—Սրանց դիմագրութիւնը անհայտ էր: Տար Կալի տեղի ունեցաւ Բալտինո գիւղում: Այդտեղ թիւրք նիզամների մի վաշտ ամրացաւ աների մէջ և սկսեց կրակ անել: Սակայն յոյները կարողացան քանդել մի առն և նուաճեցին դիւղը. թիւրքերը, օգուտը թողնելով միութիւնից, փախան: Այդտեղից կամաւորները առաջ գնացին և պաշարեցին Վալէբրինո գիւղը: Թիւրքաց սահմանն անցնելուց յետոյ կամաւորները հրատարակեցին մի յայտարարութիւն, որով հրաւիրում են մակեդոնացիներին ապստամբվել և կուսել իրանց հայրենիքի և աղատութեան համար:

Ինչպէս յայտնի է, կամաւորների արշաւանքը չունեցաւ այն հետեւանքները, որին սպասում էին: Մի քանի կռիւներից յետոյ կամաւորները վերադարձան յունաց հողը, կորցնելով մօտ 200 մարդ և գերի տանելով մօտ 90 թիւրք զինուոր:—Բայց այդ արշաւանքը պատճառ դարձաւ յոյն ժողովրդի հայրենասիրական զգացմունքների բռնկման: Աթէնքում ոգեւորութիւնը ծայրագոյն աստիճանի հասաւ, երբ լուր եկաւ այդ արշաւանքի մասին: Վիճակը ձգված է,—գրում էր մի լրագիր,—սկիզբը դրված է և աջող սկիզբ: Եկաւ դիւլօմատիայի, բանակցութիւնների, հաւաքական նստումների, նստելով պաշարումների վախճանը: Լավեց հրացանների պերճախօս ձայնը, մի ձայն, որ ամենքը պիտի լսեն:—Հասկանալի է, որ այսպիսի ոգեւորութեան մէջ յունական կառավարութիւնը, եթէ կամք էլ չունենար, պիտի պաշտօնական պատերազմ հրատարակէր: Եւ նա արաւ այն, ինչ պահանջում էր ազգը միաբերան:—Պատերազմը բարեբաղված է այժմ:

ՆԱՄԱԿ ԱՆԳԼՈՒՅՏԻՑ

Լ. Գոն, ապրիլի 10-ին

Յունաստանի սահմանադրութիւն վրա օրէ օր կացութիւնը կը ծանրանայ, առաջին ընդհարումները սկսած են արդէն, և շատ վախ կայ, որ մենք բաղնիքը յանկարծ կատարվի, զործերուն բնական բերումով, առանց մէկ կամ միւս կողմէն սրտագին փափագներուն:

Անգլիական մամուլին պահպանողական մասը ամբողջովին և աղատական թերթերուն ստուար մեծամասնութիւնը չեն ցանկանար հեղինակութիւնը պատերազմի մը, որուն հետեւանքը աղետաբեր ըլլալ կը կարծեն: Յունաստանի համար Ամեն լուրջ տեղեկութիւններէն կը տեսնուի, որ թիւրքերը Յունաստանի զէմ կուսում համար բաւական զօրաւոր են սահմանադրութիւնը ըլլորտիքը: Քանի մը չարաթ առաջ արդէն գրած էի «Աթանաքարտի» կարծիքները թրքական ուժերուն վրա, այս լուրերը կանխաձայն չէին և հետզհետէ աւելի կը հաստատվին: Թիւրք զինուորը, թէ և ոգորմելի վիճակի մէջ, սակայն դիմացկուն է ամեն տառապանքի, և կրնայ մեծ գործեր տեսնել, կը բաւէ, որ իրեն հրամայող սպաները կարող մարդեր ըլլան, և հաստատուած իրողութիւն մը կը համարուի, որ գերման սպաները մարդած են թիւրք բանակը և անոնց հրամանին ներքե պիտի մղվի պատերազմը:

Այսօր «Թայմը» սովորականէն շատ աւելի

Типографія Канцел. Главназнач. Гражданск. частью на Кавказъ, Морисъ-Меликовская ул., д. 1.